մանեցաւ յօրէ յայնմանէ, մաքրել և աւել ածել զճանապարհն զայն 'ի դրանէ անտի մինչ 'ի դուռն Այրին, եւ վասն այսր բազում անդամ եղեւ վէճ և կռիւ արիւնահեղ 'ի մէջ Լատինաց եւ Հայոց։ Յետ կատարելոյ զայս ամենայն, գրեալ ծանուցին առ Փոխարքայն Եգիպտոսի ըզգործադրութիւն Արքունի հրամանին։ Արդ՝ բացաւ դուռն Լատինաց ըստ առաջնոյն եւ դարձեալ եղեւ ոտնակոխ եկեղեցին Հայոց ('ի 20 Հոկտեմբերի, 1836)։ Ոչինչ եղեն և ապարդիւն մեծագումար ծախք և բազմադիմի աշխատութիւնք և տառապանք Հայոց։

Զայսմ հրամանագրէ՝ զոր էառ Դեսպանն Գաղղիոյ, չունէին տեղեկութիւն ոչ Ամիրայք և ոչ Փոխանորդն Երուսաղէմի, այլ զկնի բացման դրան՝ յԵրուսաղէմէ լուան, և պատուէր ետուն միաբանաց չընդդիմանալ հրամանաց Արքայի որքան բանն պահանջէ։

Իսկ Դաւիթ վարդապետ հասեալ յԱղէքսանդրիա՝ մատոյց զգրեանս Պօղոս Պէյի, և նորա ընթերցեալ ծանեաւ զմիտս նոցին. ընկալաւ զԴաւիթ 'ի տուն իւր, և խոստացաւ աշխատիլ որքան կարելի է, և ապա ազդ արար Փոխարքային 'ի Գահիրէ եւ ընկալաւ անտի զպատասխանն, և պատրաստեաց զգրեանս առ նա. գրեաց և առ մտերիմ նորին և ներքին Խորհրդակից Սամի Պէյ, և առ Յարութիւն Պէյ Թարգման և Ստեփան Էֆէնտի, լինիլ ձեռնտու վարդապետին։ Զեւ եւս մեկնեալ Դաւիթ յԱղէքսանդրեայ, եհաս առ նա գիր յԵրուսաղէմէ, յորում պատուիրէին ըզգրեանս վասն Համբարձման առաքել 'ի Կոստանդինուպոլիս, եւ յընթեռնուլն զայն առաջի Պէյին, վշտացաւ յոյժ ընդ գործս Դատաւորին եւ Յունաց, մանաւանդ թէ Լատինաց, որ զեկեղեցին Հայոց վերստին արարին ճանապարհ, այլ յուսադրէր զնա, զի թերեւս բարի լիցի վախճանն։ Պաշտպանն Յունաց անդ յԵգիպտոս էր Թօսիցա անուն ոմն մեծատուն, և Լատինաց՝ Հիւպատոսն Գաղղիոյ. սոքա հակառակութեամբ զինեալ զբազում չարիս խօսէին զՀայոց։

Մինչդեռ Հայք դեգերէին 'ի դրունս Այլազգեաց յԵրուսաղէմ, յԵգիպտոս և 'ի Կոստանդինուպոլիս և ջանային հաստատուն պահել զչինուածս Համբարձման տեղւոյն,